

Համշենահայերը միավորվում են

Սաթիկ ՄԻՍԱԿՅԱՆ

Վերջին տարիներին մամուլում մեծացել է համշենահայերի հանդեպ հետաքրքրությունը, եւ շատ հողավաճագիրներ Կրասնոդարի երկրամասի ու Աբխազիայի հայերի մասին գրելիս բոլորին ներկայացնում են որպես համշենցի: Արդյոք այդպե՞ս է:

Այս եւ այլ հարցեր պարզաբանելու նպատակով հանդիպեցի ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, 1992-2002 թթ. «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանի հետ, որը երկար տարիներ զբաղվում է համշենահայության պատմությամբ, բանահյուսությամբ եւ ազգագրությամբ:

Սերգեյ Վարդանյանը նշեց, որ Համշենը եղել է Սպերի եւ Տայքի դրկիցը, գտնվում էր հայոց Պարխարյան լեռնաշղթայից արեւմուտք, Ռիգե եւ Աթինա փոքր նավահանգիստների միջեւ: Ականատես պատմիչ Ղեւոնդի վկայությամբ, արաբական լծի տարիներին 789-790 թթ., հայր եւ որդի Շապուհ ու Համամ Ամատունի իշխանների առաջնորդությամբ շուրջ 12 հազար մարդ հայրենի վայրերից գաղթում է ներկայիս Համշենի տարածք:

Ըստ պատմիչ Հովհան Մամիկոնյանի, Համամ Ամատունին հաստատվում է Տամբուր քաղաքում, բայց նրա քեռին՝ վրաց Վաշդեն իշխանը, արաբներից զորք ստանալով, դավաճանաբար հարձակվում եւ ավերում է Տամբուրը:

Համամը վերաշինում է քաղաքը, անվանում Համամաշեն, որը սղվելով՝ դառնում է Համշեն: Ամատունիների իշխանությունը Համշենում գոյատևեց 7 դար: Համշենահայերն իրենց հայրենիքում բազում արհավիրքների դիմագրավեցին, բայց 19-րդ դարում եւ հատկապես Մեծ եղեռնից հետո ստիպված էին գաղթել Սեւ ծովի հյուսիսային ափերը:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմից հետո Գելենջիկի մոտակայքում՝ Բժեդուխ գյուղից վեր, լեռների գրկում՝ Տեմզինկայում (Շապսուղ) է հաստատվում համշենահայերի խոշոր բնակավայրերից մեկը:

Այնուհետեւ կառուցվում են համշենցի հայերի նոր գյուղեր եւ եկեղեցիներ: Նրանց առազաստանավերը խարխիս են զցում ներկայիս Կրասնոդարի երկրամասի եւ Աբխազիայի ափերին, ուր 1870 թ. սկսած հիմնում են նոր գյուղեր կամ բնակվում թուրքիա գաղթած աբխազների լքված բնակավայրերում:

- Իսկ մինչ համշենահայերի գաղթը Սեւ ծովի հյուսիսային ափերին ուրիշ հայկական բնակավայրեր չկայի՞ն:

- Ասեմ, որ ներկայիս Կրասնոդարի երկրամասի տարածքում էին դեռելս 15-16-րդ դդ. կեսին չերքեզահայերի կողմից հիմնված գյուղեր: Ինչ վերաբերում է ծովափին, ապա, ինչպես թուրք պատմիչ Ջելդեդ Փաշան է

նշում, 1784թ. Անապայի հայերն ունեին արհեստակցական ընկերություններ, բերդից դուրս կար հայկական թաղամաս եւ եկեղեցի: Դեռեւս 1818 թ. Վենետիկի Մխիթարյաններից Մինաս Բժշկյանը, լինելով Աթուխա եւ վերը հիշատակված Բժեղուխ գյուղերում, նշում է, որ նրանց բնակիչները պարսկահայեր էին:

Տրապիզոնի վիլայեթից ոչ բոլոր գաղթածներն էին համշենցի, օրինակ՝ հենց Տրապիզոն քաղաքում համշենցիները փոքրամասնություն էին կազմում, քանզի Տրապիզոնը նշանավոր առետրային կենտրոն էր, եւ այնտեղ էին բնակություն հաստատել Հայաստանի շատ գավառների բնակիչներ:

Իրենք՝ տրապիզոնցիներից շատերը, իրենց համարում էին Անիից գաղթածներ: Ինչպես բոլոր վասպուրականցիները չեն, որ վանեցի են (ի դեպ, Նախիջեւանը եւս Վասպուրականի կազմում է եղել), այնպես էլ Տրապիզոնի նահանգի բոլոր հայերը չէ, որ համշենցի էին:

- Քանի՞ համշենահայ է բնակվում Հայաստանում:
- 1993 թ. ունեինք Տրապիզոնի վիլայեթից, Կրասնոդարի երկրամասից եւ Աբխազիայից Հայաստան ներգաղթած շուրջ 14 հազար հայերի տվյալներ: Թե իրականում որքան էին, եւ նրանց մեջ համշենցիները ինչ տոկոս էին կազմում՝ չենք հասցրել ճշտել, քանի որ սկսվեց արտագաղթը, որի հետեւանքով շատերը տարագրվեցին, եւ այսօր դժվարանում են որեւէ հստակ թիվ նշել:

2002 թ. «Համշեն» հայրենակցական միությունը վերագրանցվեց, եւ ընտրվեց նոր ղեկավարություն: Հունիսին տեղի կունենա «Համշեն» հայրենակցական-բարեգործական կազմակերպության համագումարը, որը լավ առիթ է՝ ամփոփելու արվածը, ուստի խնդրեցի միության փոխնախագահ տկն Ն. Սարգսյանին՝ համառոտ ներկայացնելու երկամյա գործունեությունը:

- Մեր միությունը նախկինում, երբ դեռ բարեգործական չէր, շատ ավելի կարող էր: Սակայն հիմա մենք միայն հնարավորություն ենք ընծեռում քաղաքի տարեց եւ երիտասարդ համշենցիներին մեկ-մեկ հանդիպել ընդհանուր մի առիթով:

Նրանց համար այդպիսի շփումները կատարյալ ուրախություն են: Վերջին այդպիսի հավաքույթը մեր մեծանուն քանդակագործ վաղամեռիկ Արշակ Բեգյանի հուշ-երեկոն էր: Ցավոք, հնարավորությունների սղության պատճառով ավելին անել չենք կարող:

Չունենք անգամ սեփական գրասենյակ: Այստեղ սովորում են տարբեր տեղերից եկած համշենահայ ուսանողներ, որոնց միջեւ կապն էլ մենք ենք հաստատում: Կուզենայինք իհարկե հանրակացարան կառուցել, սեփական թանգարան ունենալ, սակայն չունենք հովանավոր: Սա է պատճառը, որ ամեն տեղից զուրկ ենք: Ձուրկ ենք միայն նյութապես, սակայն հարուստ մշակույթ ունենք:

ՀԵՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆԿԻՐՎԱԾ Է ԼԻՆԵՆՈՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻՆ

Կալիֆոռնիայից ստացված ազդագիրը տեղեկացնում է, որ պատմական Հայաստանի քաղաքներին եւ նահանգներին նվիրված Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի միջազգային գիտաժողովների շարքի հերթական միջոցառումը նվիրված է Նոր Ջուլայի 400-ամյակին: Վերոհիշյալ համալսարանի հայոց պատմության կրթական հիմնադրամի ամբիոնի գլխավոր հովանավորությամբ եւ դրա «Ֆոն Գրունբաումի» անվան Մերձավոր Արեւելքի, եվրոպական եւ եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնների հովանավորությամբ գիտաժողովը տեղի կունենա նոյեմբերի 14-16-ը Գլենդեյլի Պրեսբիթերյան եկեղեցում (բացման հանդիսություն) եւ Կալիֆոռնիա համալսարանի «Յանգ հոլ» դահլիճում: Մասնակցելու են գիտնականներ Արգենտինայից, Հայաստանից, Բելգիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Իրանից, Քուվեյթից, Միացյալ Արաբական Եմիրություններից, Միացյալ Նահանգներից եւ Իսպանիայից:

Գիտաժողովի բացումը կատարելու է գլխավոր կազմակերպիչ եւ Կալիֆոռնիա համալսարանի վերոհիշյալ ամբիոնի վարիչ Ռիչարդ Հովհաննիսյանը, որը խոսելու է Նոր Ջուլայի 400-ամյա (1604/5-2004) փառավոր պատմության մասին: Ապա «Նոր Ջուլայի ֆենոմենի պատմափիլիսոփայական վերլուծության փորձ» է կատարելու Երեւանի պետական համալսարանի պրոֆ Հրաչիկ Միրզոյանը: Այնուհետեւ «Նոր Ջուլայի հայկական եկեղեցիների առանձնահատկությունների» մասին է զեկուցելու Երեւանի արվեստի ինստիտուտից պրոֆ. Մուրադ Հասրաթյանը: «Իրանահայ միություն: Մշակութային հայտագրի» շրջանակներում զեկուցումներով հանդես են գալու Երեւանի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից պրոֆ. Ջեմմա Մանասյանն ու Իսպահանի Նոր Ջուլայի հայոց թեմի առաջնորդ Շահան վարդապետ Սարգիսյանը, համապատասխանաբար «Նոր Ջուլայի բարբառն ըստ Հր. Աճառյանի «Քննություն Նոր Ջուլայի բարբառի» աշխատության եւ «Նոր Ջուլայի եւ Հարավային Պարսկաստանի թեմի ներկա իրավիճակը» թեմաներով:

Բոլոր ելույթներն ընթանալու են հայերենով: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 15-ին, առավոտյան նիստում Կալիֆոռնիա համալսարանի գիտությունների մասնաշենքի «Յանգ հոլ» դահլիճում կարդացվելու են հետեւյալ զեկուցումները՝ «Ասք Նոր Ջուլայի մասին» (Ռիչարդ Հովհաննիսյան, ԱՄՆ), «Նոր Ջուլա: Անցյալն ու ներկան» (Ջոն Կարսուել, Իսպանիա), «Հայկական սփյուռքը Սեֆյան Իրանում: Դավանափոխություն, մշակութային մերձեցում եւ դիմադրություն» (Ինա Բաղդիանց Սկրաբի՝ Թաֆթս համալսարանից), «17-րդ դարում Նոր Ջուլայի սոցիալական եւ ներքին վարչական կառուցվածքը» (Վազգեն Ղուկասյան՝ Նյու Յորքի հայկական եկեղեցու արեւելյան թեմից):

Հետմիջօրեին կարդացվելու են՝ «Առաքել Դավրիժեցին եւ Սեֆյան էսքետիկան» (Էյմի Լանդաու, Օքսֆորդ համալսարանից), «Նոր Ջուլայի 17ևրդ դարի ձեռագրերը» (Սիլվի Մերյան, Փիեռպոն Մորգան գրադարանից, Նյու Յորք), «Սեֆյան Պարսկաստանում կրոնական նյութերի օգտագործումն ու շրջանառությունը: Նոր Ջուլայի պարագան» (Սայեհ Լապորթևէֆթեքարյան, Բրյուսելի Ազատ համալսարանից), «Նոր Ջուլայի վաճառականների եւ Արեւելյան Հնդկաստանում անգլիական ընկերության միջեւ հարաբերությունները» (Էդմոնդ Հերզիգ, Մանչեսթրի համալսարանից), «Լազարյանի առեւտրային ընկերությունն ըստ Հարություն Լազարյանի գլխավոր մատյանի եւ թղթակցությունների» (Շուշանիկ Խաչիկյան, Մաշտոցի անվան Մատենադարանից, Երեւան), «Հայտնաբերում Նոր Ջուլայի առեւտրական նամակների մի գանձի» (Սեպուհ Ավանյան, Կոլումբիա համալսարանից), «Նոր Ջուլայի փորագրված խեցեգործությունը» (Տիգրան Գույումջյան, Կալիֆոռնիայի պետական համալսարանից, Ֆրեզնո), «Նոր Ջուլան որպես հայկիրանական մշակութային հարաբերությունների գոտի Ղաջար խանի իշխանության օրոք» (Ռաիսա Ամիրբեկյան, իրանական ուսումնասիրությունների կոլկասյան կենտրոնից, Երեւան) եւ «Նոր Ջուլայից դեպի Իսպանիա եւ Հարավային Ամերիկա» (Վարդան Մաթոսյան, Սալվադորի համալսարանից, Բուենոս Այրես) զեկուցումները: Կիրակի օրվա՝ նոյեմբերի 16ևի առավոտյան միստը կայանալու է հայերեն: Ելույթ են ունենալու Արծվի Բախշինյանը՝ Երեւանից («Հյուսիսային Եվրոպան եւ Նոր Ջուլայի հայ առեւտրականները»), Աշոտ Ստեփանյանը՝ Երեւանի արեւելագիտության ինստիտուտից («Նոր Ջուլայի կենցաղային մշակույթը 17-18-րդ դարերում: Արիեստագործություն») եւ Արմեն Հախնազարյանը՝ Գերմանիայից («Նոր Ջուլայի ճարտարապետությունը»): Ցերեկվա միստը, որն ընթանալու է անգլերեն, ընդգրկելու է հետեւյալ զեկուցումները՝ «Արեւմտյան մոդելներ Սուրբ Փրկչի եւ Սբ. Բեթղեհեմի եկեղեցիների որմնանկարներում» (Կորյուն արք. Պապյան՝ Քուվեյթի եւ Միացյալ Արաբական Էմիրությունների հոգեւոր հովիվ), «Նոր Ջուլայի հայկական բարբառը» (Բերտ Վո, Վիսկոնսինի համալսարանից), «Ամենօրյա կյանքի արտացոլումն Նոր Ջուլայի շրջանի երգերում եւ բանաստեղծություններում» (Անահիտ Քեչիշյան, Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանից) եւ «Պատկերներ Նոր Ջուլայից: Սմբատի նկարները եւ հիշողությունները» (Լեոնարդո Օլիշան, Յուտայի համալսարանից, ԱՄՆ):

Գիտաժողովն այս շարքի 13ևրդն է: Նախորդները նվիրված են եղել ՎանևՎասպուրականին, ԲաղեշևԲիթլիսին, ՏարոնևՄուշին, ՁոփքևԽարբերդին, ԿարինևԵրզրումին, ՍեբաստիանևՎասին, ՏիգրանակերտևԴիարբեքիին, ԵդեսիանևՈւրֆային, Կիլիկիային, Կոստանդնուպոլսին, Կարսին եւ Անիին, Սեւ ծովևՊոնտոս շրջանին, Ձմյուռնիային եւ Կեսարիային:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ՎԱԽՃԱՆՎԵՑ ԱՐՏԱՇԵՍ ՍԱԹԵՎՈՍՅԱՆԸ

82 տարեկանում վախճանվեց այսօրվա հայագիտության մեծ երախտավորներից Արտաշես Մաթեոսյանը: Ծանր կյանք վիճակվեց նրան, որբի մանկությունից մինչև Չայրենական մեծ պատերազմ, ապա 1940-ական թթ. վերջերի բռնությունների լարված սպասումի տարիներ: Ապագա գիտնականը, սակայն, ուժ գտավ հաղթահարելու բոլոր փորձությունները: Ընդունվեց եւ գերազանց գնահատականներով ավարտեց Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Մի քանի տարի այստեղ դասավանդելուց հետո ընդունվում է Երեւանի Մատենադարան՝ հետագա ողջ կյանքը կապելով Մատենադարանի հետ ու կատարելով ձեռագրագիտական հիմնարար ուսումնասիրություններ ու բազմաթիվ ճշգրտումներ, որոնք վերաբերում են ձեռագրերի գրչությանը, տեղին, ժամանակին ու ծաղկողներին եւ գրիչներին:

Մատենադարանի եւ աշխարհի ձեռագրատների հավաքածուների հիման վրա բազմավաստակ ձեռագրագետը կազմեց աշխարհում հայ գրչության կենտրոնների քարտեզը, որը Մատենադարանի այցելուներին պատկերացում է տալիս, թե Պատմական Հայաստանի ո՞ր վայրում եւ աշխարհի ո՞ր անկյունում որքան հայկական ձեռագրեր են գրվել:

Ա. Մաթեոսյանը մշակեց հայ գրչության կենտրոնների ուսումնասիրման մեթոդաբանական ելակետերը՝ դրանք գործնականում կիրառելով «Մեծփավանքի գրչության կենտրոնը» մեծարժեք ուսումնասիրությունում, ինչպես նաեւ առանձին երկու հատորներով հրատարակել է հայկական ձեռագրերի Ե, ԺԲ եւ ԺԳ դարերն ընդգրկող հիշատակարանները:

Մաթեոսյանի անվան հետ են կապվում հայկական հնագույն ձեռագրերից երկուսի՝ Վազգեն Վեհափառի անվանված Ավետարանի եւ թղթյա նշանավոր ձեռագրի լուսատիպ հրատարակությունների եւ դրանց համապատասխան ծանոթագրություններով օժտված բնագրերի տպագրությունը:

Մեծ է Մաթեոսյանի վաստակը նաեւ միջնադարի մեր մի շարք երախտավորների գործունեության, մատենագրական վաստակի եւ հայ գրչությանը բերած նպաստի ուսումնասիրման գործում: Իր բազմաբնույթ այս աշխատանքներին զուգընթաց Մաթեոսյանը, սակայն, իր կյանքի գործն էր համարում հայ հնագրության քարտեզի ստեղծումը, որով առանձին աղյուսակներով պետք է ներկայացվեին հայկական բոլոր գրատեսակները՝ մաշտոցյան շրջանի վաղ երկաթագրի տարատեսակներից մինչև ուշ միջնադարյան շղագիրն ու նոտրգիրը: Հազարավոր ձեռագրերի՝ Մաթեոսյանի տասնամյակների ընթացքում կատարված քննության հիման վրա կազմված այս գործը, ինչպես նաեւ հայ գրերի ստեղծմանը վերաբերող մի շարք աշխատություններ գրեթե

պատրաստ են հրատարակության եւ հուսանք, որ հայ դպրության նվիրյալ բարերարների շնորհիվ կտպագրվեն առաջիկա տարիներին:

Գիտական գործունեությանը զուգընթաց նա շուրջ 20 տարի դասավանդեց Ս. Էջմիածնի Գեղորգյան հոգեւոր ճեմարանում: Ի գնահատություն դասախոսական այս աշխատանքի եւ Հայոց եկեղեցուն բերած իր նպաստի՝ երջանկահիշատակ Գարեգին Առաջինի կողմից արժանացավ Հայոց եկեղեցու «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանին:

Լինելով Մատենադարանի ավագագույն աշխատակիցներից մեկը, իր անսպառ եռանդով, որով մինչեւ վերջին օրն իսկ Մատենադարանի իր աշխատասենյակում հակված էր ձեռագրերի բացված էջերին, երիտասարդ աշխատակիցների համար գիտությանն ու հայ մշակույթին ամբողջական նվիրումի կենդանի մի օրինակ էր:

Նրա հիշատակը վառ կմնա իրեն ճանաչողների սրտերում, ու Մատենադարանի կամարների ներքո կշարունակի արձագանքվել ի պաշտպանություն մեր ազգային եւ հոգեւոր արժեքների հնչող եւ ջերմագին սիրով լեցուն մտահոգ ու տազնապած ձայնը:

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ՆՎԻՐՎԱԾ ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍՁՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

Հայ մշակույթի երախտավոր, գիտության նվիրյալ սպասավոր, Մաշտոցի անվան Մատենադարանի երկար տարիների փոխտնօրեն Բաբկեն Չուգասոյանի ծննդյան 80-ամյակը նշվեց երեկ ՀԳՄ մեծ դահլիճում:

Երաժշտական հրաշալի կատարմանը հաջորդեց «Մատենադարան» ֆիլմաշարից Բաբկեն Չուգասոյանին նվիրված տեսաժապավենից հատված: Հոբելյանական օրվա առիթով հավաքված մտավորականներն, իբրեւ Բաբկեն Չուգասոյանի գիտական երկար տարիների աշխատանքային գործունեության վկաներ, իրենց հիշողությունների տպավորություններով ամբողջացրին անխոնջ գիտնականի եւ ազնիվ քաղաքացու կերպարը:

Բաբկեն Չուգասոյանը ծնվել է 1923 թ. Թավրիզում, սեբաստացու ընտանիքում: Սովորել է տեղի Հայկազյաննժամարյան եւ Արամյան, ապա՝ պարսկական եւ ամերիկյան կրթարաններում: Աշխատել է Թեհրանում եւ Թավրիզում: 1946 թ. 23 տարեկանում ընտանիքի հետ տեղափոխվում է Հայաստան, 1946-ին ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, ավարտելուց հետո աշխատում համալսարանի հրատարակչությունում, 1955-ից՝ գրականության ինստիտուտում, իսկ 1965-ից արդեն Մատենադարանում գիտական գծով փոխտնօրեն:

Բաբկեն Չուգասոյանի կյանքի եւ գիտական գործունեության էջերը վերհիշելով իրենց ելույթներում ԳԱԱ իսկական անդամ, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի

վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը արժեւորեցին գիտնականի երկար տարիների վաստակը: Հուշեցրեցին, որ բացման խոսքում «Սեբաստիա» հայրենակցական միության նախագահ Գրիգոր Գույումջյանն անդրադարձավ գիտնականի գործունեության ավելի քիչ հայտնի էջերին: Խորհրդային գաղափարախոսության եւ քաղաքականության խստագույն եւ ամենափակ շրջանում Բաբկեն Չուգասոյանն իր ծայնն է բարձրացրել հոգուտ հայրենակցական միությունների ակտիվ գործունեության, սփյուռքահայ կյանքի ընդարձակ լուսաբանման, կրթարանների եւ մայրաքաղաքի փողոցների վերանվանման եւ նման շատ հարցերի: Կյանքի առաջացած տարիքում նա նախածեռնեց եւ հիմնադրեց «Սեբաստիա» հայրենակցական միությունը:

Բաբկեն Չուգասոյանի գիտական վաստակը հիրավի գնահատելի եւ մեծ է նրա կատարած աշխատանքը հատկապես Մատենադարանի ձեռագրային հավաքածուները հարստացնելու գործում: Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի վկայությամբ, 1965-94 թթ. փոխտնօրեն աշխատելու տարիներին նրա շնորհիվ հայրենադարձվել կամ կորստից փրկվել են մի քանի տասնյակ ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, հնատիպ գրքեր: Ձեռագրերի որոնման դժվարին աշխատանքները կատարել է ամենայն նախանձախնդրությամբ՝ շրջելով գյուղից գյուղ, ավանից ավան, մի ձեռագրի հետեւից հասնելով օվկիանոսից այն կողմ: Այս առիթով Սեն Արեւշատյանը հիշեց մի ձեռագրի պատմություն: 1906 թ. Հրաչյա Աճառյանը Թավրիզում ծանոթանում է «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստոց» ձեռագրին եւ հիացմունքով արտահայտվում. «Ի՞նչ ձեռագիր էր, ամբողջ Թավրիզն արժեր ինձ համար»: Ժամանակներ անց ձեռագիրն անհետանում է: Միայն 1971 թ., երբ ամերիկահայ պրոֆ. Ավետիս Սանջյանը տեղեկացնում է Լոս Անջելեսում հայտնված ձեռագրի մասին, գիտնականը մեկնում է ԱՄՆ, գտնում այդ մարդկանց, պատճենահանում ձեռագիրը եւ Երեւանում ծավալուն ներածականով հրատարակման պատրաստում: Գիտական այս հրատարակության հիման վրա անցյալ տարի Ջալքերուզի համալսարանը թարգմանաբար հրատարակման է պատրաստել «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստոց» ձեռագիրը՝ արժեւորելով Չուգասոյանի վաստակը ձեռագրի փրկության գործում:

«Հայկիրանական գրական կապերը» թեկնածուական թեզի հրատարակմանը հաջորդեցին գիտնականի բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից հիշատակվեցին սեբաստահայերին նվիրված երկհատորյակը (Սեբաստիայի պատմությունը՝ սկսած Սբ. Նշան վանքի հիմնադրումից (XI դար) մինչեւ XIX դարի 40-ական թվականները): Տասնյակհարյուրավոր գիտական հոդվածների, պարսկերենահայերեն բացատրական բառարանի, բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակը լուրջ հետաքրքրություն է ունեցել հատկապես միջնադարյան հայ մշակույթի հանդեպ: Ըստ որում, ի

տարբերություն անգամ Մանուկ Աբեղյանի, որ միջնադարյան հայ մշակույթը դիտարկում էր միայն գեղարվեստական գրականություն որոնելու մեկնակետով, Բաբկեն Չուգասյանի ուսումնասիրությունների ծավալն ընդգրկում էր միջնադարյան հայ ողջ մատենագրությունն ընդհանրապես: Նա վստահորեն եւ հմտությամբ էր անդրադառնում իրեն նախորդած հայտնի ձեռագրագետների բնագրային ուսումնասիրություններին եւ առհասարակ գիտական ոլորտի յուրաքանչյուր խնդրի:

Ելույթներն ընդմիջող գեղարվեստական հայտագիրը ցերեկույթին հաղորդում էր ջերմ ու բանաստեղծական շունչ: Ազատ Գասպարյանի չարենցյան շեշտադրումով ասմունքը, Դ. Վարուժանի անվան միջնակարգ դպրոցի երգչախմբի ելույթները, ապա եւ Երվանդ Մանարյանի, Վերոնիկա Գեւորգյանի, Ժոզեֆ Ավետիսյանի, Օֆելյա Պետրոսյանի խոսքերը հարգանքի տուրք էին արժանի հայրորդու, մտավորականի, գիտնականի հիշատակին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Survivors of The Armenian Genocide

**KRISTINE
HAGOPIAN**

born 1906, Smyrna (Izmir)



We had already been deported once, in 1915, sent towards Der-Zor. But, my uncle's friend had connections in the government and he had us ordered back to Izmir.

Orders came again that everyone must gather in front of the Armenian church to be deported. My father refused to go and told us not to worry. He didn't think the Turkish government would do anything to him, since he was a government employee himself.

Twelve Turkish soldiers and an official came very early the next morning. We were still asleep. They dragged us out in our nightgowns and lined us up against the living room wall. Then the official ordered my father to lie down on the ground... they are dirty the Turks... very dirty... I can't say what they did to him. They raped him! Raped! Just like that. Right in front of us. And that official made us watch. He whipped us if we turned away. My mother lost consciousness and fell to the floor.

Afterwards, we couldn't find our father. My mother looked for him frantically. He was in the attic, trying to hang himself. Fortunately, my mother found him before it was too late.

My father did eventually kill himself—later, after we escaped.